



Բաժնեգին տարեկան.— Ֆրանսա եւ Սուրիա 10 ֆր. Պալքանեան երկիրներ 50 Սէնթ, արտասահման 60 Սէնթ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

Թիի 8

Է. ՏԱՐԻ

ՕԴՈՍՏՈՍ 1931

ՆԷԵՄԱՆ, ԿԱՄ ԵՐԿՐՈՐԴ “ԲԱՅՑ”, Ը

DR. G. C. MORGAN

Եւ շատ բորոտներ կային Իսրայէլի մէջ Եղիսէ մարգարէին ատենը, ու անոնցմէ մէկը չմաքրուեցաւ, հապա միայն Նէեման Ասորի:

Ղուկ. Դ. 27

Յիսուսի խօսքերէն կը հասկնանք թէ Նէեման երկրորդ «բայց» մը ունէր իր կեանքին մէջ: Հին Կտակարանին մէջ տեսանք առաջին «բայց»ը որ խիստ տխուր էր: Անիկա իր պէրովը առջեւ մեծ ու յարգելի մարդ մըն էր, բայց բորոտ էր: Արդ Յիսուս կ'ըսէ, «Շատ բորոտներ կային Իսրայէլի մէջ... ու անոնցմէ մէկը չմաքրուեցաւ, բայց (հապա) միայն Նէեման»: Ու անոր մարմինը պզտիկ տղու մը մարմինին պէս եղաւ:

Բորոտներ Իսրայէլի մէջ: Բորոտներ Ուխտի որդւոցը մէջ: Ի՞նչ սոսկալի յայտնութիւն: Մեզի համար բաւական չէ որ առանձնաշնորհեալ ժողովուրդի մը մէջ բնակինք կամ Տէրովը վախովը մեծցած ըլլանք, այլ Քրիստոսի բերած կեանքին անձնապէս փորձառու ըլլալու ենք:

Ա. Քրիստոսի կը կարօտիմ իմ անցեալ կեանքիս համար:

Բ. Անոր կը կարօտիմ այս օրուան կեանքիս մէջ:

Գ. Անոր կը կարօտիմ վաղուան կեանքիս համար:

Անցեալ կեանքս իմ անձիս համար ապրած եւ

Աստուծոյ դէմ ապստամբ գտնուած եմ: Ենթադրենք թէ այսօր Քրիստոսի հրաւերը ընդունելով ինքզինքս Անոր յանձնեմ, Ի՞նչ պիտի ըլլայ իմ անցեալ կեանքս: Եթէ անցեալս կերպով մը չկարգադրուի, խաղաղութիւն չեմ կրնար գտնել: Նաեւ ներկայ կեանքս կարգադրութեան կը կարօտի: Ենթադրենք թէ անցեալ կեանքիս հանդիւր կերպով մը փակուեցաւ, ինչպէ՞ս պիտի ապրիմ ներկայ կեանքս եթէ իմ անձիս մէջ փոփոխութիւն մը տեղի չունենայ: Յետոյ վաղուան նայելով միեւնոյն փորձութիւնները աչքիս առջեւ կը պատկերանան եւ ես ինծի կ'ըսեմ, թէպէտեւ Աստուած անցեալս սրբէ եւ ներկայիս մէջ զիս ընդունի, սակայն եթէ վաղուան համար մասնաւոր պատրաստութիւն մը չտեսնէ, վաղը ինքզինքս բոլորովին անօգնական պիտի գտնեմ:

Երէկուան համար՝ թողութեան, այսօրուան համար՝ մաքրութեան, եւ վաղուան համար՝ զօրութեան պէտք ունիմ:

Ա. Ի՞նչպէս կը կարգադրուի անցեալս: Տէրը խաչին քով ինծի հանդիպելով կ'ըսէ, «Բու մեղքերդ ամպի պէս ջնջեցի»: Իւր անձնական արիւնը թափելով կը ջնջէ իմ մեղքերս:

Բ. Սակայն ինծի աւելին պէտք է: Ես ինքզինքս մաքուր զգալու եմ եւ զիտնալու եմ թէ Տէրը զիս ընդունած է: Եւ ահա զիս կրկին խաչին առջեւ տա-

նելով կ'ըսէ թէ Ինք ոչ միայն պիտի ներէ իմ մեղքերս, այլ նաեւ պիտի մաքրէ զիս ամէն անօրէնութենէ: Կ'ըսէ թէ պիտի սրբէ իմ բնութիւնս եւ Իրեն նման պիտի ընէ եւ Իր կեանքը իմ մէջս ապրելով զիս ընդունելի պիտի ընէ Աստուծոյ:

Գ. Այո, բայց վա՞ղը: Ինչպէ՞ս պիտի ապրիմ վա՞ղը: Եւ ահա Փրկիչը մօտենալով ականջիս կը խօսի մեզմիւ. «Ահա ես քեզի հետ եմ»: «Ան որ Իր Որդւոյն չխնայեց, հապա մեր ամենուն համար մատնեց զանիկա, ալ ի՞նչպէս անոր հետ ամէն բաները մեզի չապրգեւեր:

Եկուր եւ փորձէ: Բայց հնազանդութեամբ մօտեցիր Անոր: Նէեման քիչ մնաց որ չբժշկուէր: Անիկա կը խորհէր թէ իր մտածած կերպովը բժշկուելու էր, եւ չուզեց հնազանդի մարգարէին հրամանին. Աստուծոյ հրամանները միմիայն հնազանդութեամբ կարելի է ձեռք բերել:

Տարիներ առաջ երբ աւետարանչական ժողովներու կ'առաջնորդէի, եկեղեցիին ամենէն ետեւի շարքին վրայ մարդու մը հանդիպեցայ որուն դէմքէն յայտնի էր թէ Աստուծոյ Հոգին անոր մէջ կը գործէր: Երբ այլ եւ այլ անձերու հետ խօսելով զանոնք տառնալիս սենեակ մը կը հրաւիրէի իրենց փրկութեան օգնելու, յիշեալ մարդը երեսս նայելով ըսաւ, «Զե՛մ կրնար առանց այդ սենեակը երթալու ալ փրկուիլ»: Այդ կարգի հարցում մը ուղղողին պէտք է հարցման յարմար պատասխան մը տալ. ուստի ըսի, «Ոչ, չեմ կարծեր թէ կրնաս»: «Ինչո՞ւ, փրկութիւնը այդ տառնալիս սենեակին մէջն է», հարցուց անիկա: «Ոչ, փրկութիւնը Աստուծոյ մէջն է», ըսի, «սակայն եթէ նստած տեղդ մնաս եւ Աստուծոյ առջեւ քու պայմաններդ դնես փրկութեան մասին, աւտով կ'ապացուցանես թէ տակաւին անձիդ համար կ'ուզես ապրիլ եւ չես կրնար փրկութիւն ստանալ»:

«Եթէ առանց այդ սենեակը երթալու չեմ կրնար փրկուիլ, ուրեմն ես դժոխք կ'երթամ», ընդմիջեց մարդը:

Եղբայրս, Աստուծոյ ընտրութիւնը այդ չէ քեզի համար, սակայն եթէ դուն դժոխքը կը նախընտրես, ես քեզի չեմ կրնար օգնել» պատասխանեցի:

Անիկա ամէն իրիկուն ժողովի եկաւ: Աստուծոյ շնորհքը որչա՞փ մեծ է: Անիկա մեզ չթողուր եթէ նոյնիսկ յիմար խօսքեր հանենք մեր բերաններէն:

Զգուշացուցի օգնականներս որ անոր հետ չխօսին, այլ զայն Աստուծոյ առաջնորդութեան թողուն:

Երբեք չեմ մոռնար վերջին գիշերը: Տակաւին առաջ գալու հրաւերը չտրուած, յիշեալ մարդը ելաւ եւ բեմին առջեւի սեղանին մօտեցաւ:

«Ես կը խորհէի թէ դժոխք պիտի երթայիր», ըսի անոր: Այս ամբողջ շաբաթը դժոխքին մէջ էի արդէն», պատասխանեց անիկա:

Փառք Աստուծոյ որ երբեմն աղէկ է մարդոց համար քիչ մը ատեն դժոխքի մէջ գտնուիլ:

Շատ բորոտներ կային, բայց միայն Նէեման բժշկուեցաւ, որովհետեւ վերջապէս հնազանդեցաւ: Նաեւ շատեր կան որ մեղքի բորոտութենէն կը տանջուին, սակայն միայն անոնք թողութիւն կը գտնեն որ կը հնազանդին Տէրոջը իրենց առաջարկած ճամբային ու կերպին:

Մ Ա Հ Է Ն Կ Ե Ա Ն Ք Ի

Ռուս համայնավար ամուլ մը իրենց բոլոր զաւակները կորսնցուցին: Դեռատի կինը որ շատ զարգացած էր, «Կօմսօմօլկա»-յի անդամ երաժրաստի իտէալապաշտ, այս կորուստին վրայ այնքան անբուժելիօրէն վիրաւորուեցաւ որ իր ամուսնոյն յայտարարեց թէ կ'ուզէր անձնասպան ըլլալ վասնզի կեանքը իրեն համար այլեւս ոչ մէկ նպատակ ունէր: Ամուսինը շատ դժուարութեամբ միայն կրցաւ զայն խաղաղեցնել եւ այս խորհուրդէն ազատել:

Շատ չանցած ամուսինն ալ մեռաւ: Հիմայ այլեւս ոչ մէկ բան կ'արգիլէր դժբաղդ կինը իր անձնասպանութեան ծրագիրը գործադրելէ: Նախ թոյն խմեց, բայց այնքան մեծ քանակութեամբ որ ստիպուեցաւ փոխել: Յետոյ որոշեց ինքզինքը կախել. կը խորհէր թէ այս միջոցը աւելի վստահ էր: Արդէն սեղանի մը վրայ ելած էր, չուանը վիզը անցուցած եւ օդին մէջ պիտի կախէր ինքզինքը, երբ յանկարծ Յուդայի օրինակը միտքն ինկաւ. «Ո՛չ», խորհեցաւ ան, «կեանքս անոր նման վերջացնել չեմ ուզեր», եւ չուանը մէկդի նետեց:

Քանի մը օր յետոյ երբ նորէն յուսահատութեան ճգնաժամէ մը կ'անցնէր, դանակ մը առաւ եւ արեան երակ մը կտրեց, երբ արիւնին ժայթքիլը տեսաւ՝ ինքզինքը կորսնցուց եւ զետին տապալեցաւ: Անկումի ձայնէն զրացիները սարսափահար օգնութեան վազելով անմիջապէս բժիշկ մը կանչեցին: Հիւանդանոցին մէջ բժիշկը ըսաւ. «քեզի պատահածը հրաշք մըն է, որովհետեւ անկումիդ և մարելուդ պատճառաւ երակներդ կծկուած ըլլալով թոյլ տուած չեն որ արիւնդ բոլորովին դուրս հոսի»: Քանի մը շաբաթ յետոյ տիկինը հիւանդանոցէն մեկնեցաւ բոլորովին բժշկուած:

Բայց Սատանան իր զոհը չէր թողուր: Նորէն թոյն խմեց, բայց ի դուր:

Յուսահատութիւնը երթալով կ'աւելնար:

Օր մը երբ իրեն բարեկամուհի ուրիշ համայնավար կնոջ մը այցելութեան գացած էր՝ սեղանին վրայ ըվօլվէր մը տեսաւ: Գործիքին տեսութիւնը վայրկեանայէս նոր որոշման բերաւ զինքը: Բարեկամուհիին վայրկեանական անուշադրութենէն օգուտ քաղելով հրացանը առաւ եւ դուրս ելլելով ուղղակի իր զաւակացը գերեզմաններուն վրայ գնաց:

Պայթիւն մը լսուեցաւ և նա գետին ինկաւ: Մօտը գտնուող անձեր վազելով զայն հիւանդանոց փոխադրեցին...: «Ո՛ւր եմ ես. թէ ոչ դժոխքին մէջ. բայց ո՛ւր եմ ես» զոչեց նա անմիջապէս որ գիտակցութեան եկաւ: Բժիշկը զայն հանդարտեցուց: «Դժոխքը չես հապա հիւանդանոցը, միայն թէ ընկուկէրի հարուածով մը երկու աչքերդ կուրցուցած ես»:

Հագիւ թէ առանձին մնաց՝ սկսաւ բոլոր ուժովը գլուխը պատին զարնել, վերջ տալու համար ֆիզիքայէս և բարոյապէս այսքան թշուառացած կեանքի մը: Բայց նորէն ամէն ջանք անօգուտ եղաւ: Օրերը կ'անցնէին, և նա ստիպուեցաւ համակերպիլ իր վիճակին:

Իր պառաւ մայրիկը օր մը քովը եկաւ: Աչքերով կոյր ու հոգիով կորսուած իր աղջիկը տեսնելով առատ արցունքներ թափեց: Բայց նա անզգայ մնաց. անաստուած էր և անաստուած մնալ կ'ուզէր: Եւ ինչ որ աւելին է՝ այս տարաբաղդ երիտասարդ կինը՝ տեսակ մը կծու և շեշտուած կատաղութեան զոհ դարձած՝ իր հիւանդի մահիճէն իրեն յիշատակները կը զրուցազրէր «բեզբօժնիկ» անունով պատկերազարդ մեծ թերթին զրկելու, որ «անաստուածներու» ընկերութեան պաշտօնաթերթն էր: Բայց և այնպէս՝ բարի հովիւը Իր մոլորած ոչխարը կը փնտնէր. և վազ չէր դար մինչեւ որ զայն գտնէր:

Օր մը ուրիշ այցելու մը եկաւ. նախկին բարեկամունի մը որ հիմա Բրիստոնեայ միաբանութեան մը անդամն էր:

«Ինչո՞ւ այդպէս կը հակառակիս. դուն բոլորովին անտեղեկ ես և չես գիտեր թէ ինչ է ճշմարիտ քրիստոնէութիւնը: Անգամ մը զոնէ եկուր մեր ժողովներուն ներկայ եղիր», ըսաւ նա թախանձանքով:

— «Այո՛, պիտի գամ. և յետոյ հրապարակաւ պիտի կրնամ հերքել ձեր կրօնական մոլութիւնները. ու նաեւ իմ «բէզբօժնիկ» իս զրեւու նիւթ պիտի գտնեմ». զոչեց կոյրը սաստիկ բարկութեամբ:

Ժողովի գնաց: Երբ երգերը լսեց և Աստուծոյ խօսքը մտիկ ըրաւ՝ ամբողջ էութիւնը սարսեցաւ, տապալեցաւ, յեղաշրջուեցաւ, տակնուվրայ եղաւ: Բրիստոնի խաչին թշնամի եղող այս կինը՝ Փրկչին ոտքը ինկած Անկէ թողութիւն խնդրեց և ինքզինքը Անոր յանձնեց:

Պօղոս Առաքեալի նման հալածիչէ մը Բրիստոնի աշակերտ մը դարձած այս կնոջ մէջ՝ Սուրբ հոգիին այնպիսի լեցուն զօրութիւնը կայ, այնպիսի հեղինակութիւն մը՝ որուն մէկը չհամարձակիր դէմ կենալ: Երբ Ս. քաղաքին ժողովարարն մտնէ՝ սրահը չափէն աւելի լեցուած կ'ըլլայ: Իրեն վկայութիւնը կ'սկսի յաճախ իր սեւ ակնոցները վերցնելով. որպէսզի ամէն ալ տեսնեն փորուած երկու ահեղի փոսերը: Յետոյ կ'ըսէ. «Սիրելի բարեկամներ», կ'ուզեմ ձեզի ցուցնել թէ Սատանան ինչպէս կը վարձատրէ իրեն հաւատարիմ մէկ ըսպասուհին». յետոյ թեւը վեր կը վերցնէ իր կտրած շնչեղակին վերքի խորունկ փոսը ցուցնելու համար: «Իմ

կեանքս կորսուած էր, բայց Բրիստոնի արիւնը զիս փրկեց»: Յայնժամ բարձրաձայն հեծկլտուքներ կը լսուին լացող ունկնդիրներուն մէջ:

Անհամար է թիւը այն հոգիներուն՝ զորոնք այս կինը Բրիստոնի լոյսին առաջնորդած է. անոնց մէջ կան նաեւ շատ մը համայնավարներ:

ԿԸ ՀԱՒԱՏԱՄ

Տես, մեղքերուդ տակ ահաւոր
Աստուածորդին գեանահար՝
Կը տառապի ո՛վ մեղաւոր
Քու փրկութեանդ համար:

Այս անսահման ցաւին առջեւ
Խոնարհի՛ր ո՛վ մեղաւոր,
Եւ հոս ձգէ այսուհետեւ
Անթիւ մեղքերդ բիւրաւոր:

Տես, քու տեղդ Աստուածորդին
Ապտակելով կը դատեն...
Ու կը թքեն սուրբ երեսին
Շրթներով պիղծ, անօրէն:

Այս Արդարին համբերութեան
Առջեւ դատուիր ով թշուառ.
Հագիր Անոր արդարութեան
Մաքուր բեհեզն սրբավառ:

Տես, քու տեղդ դատաւարտուած
Աստուածորդին կը խաչուի...
Մեղքիդ համար կողէն պատուած
Ջուր եւ արիւն կը հոսի:

Աստուածազոյ պատարագին
Հաւատա մի՛շտ անկասկած,
Եւ իր սիրոյ մեծ հոսանքին
Յանձնէ կեանքդ կորսուած:

*
* *

Օ՛հ, սէր անհուն, Հայրն իր Որդին
Մահուան մահուեց ինձ համար.
Իր մահն եղաւ ինձ փրկագին
Խաչն ալ միջոց փրկարար:

Կը հաւատամ մորթուած Գառնուկ
Պատարագիդ քաւարար.
Քեզի կուտամ խեղճ, աննեցուկ
Մահապարտ կեանքս մեղսահար:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

ՕՐՀՆԵԱՒ, ԿԵԱՆՔԻՆ ՆԵՐԿԱՆ

Dr. F. B. Meyer

ԿԸ ՍՈՐՎԵՑՆԷ

Եւ այն օծութիւնը զոր դուք Իրմէ ընդունեցիք, ձեր մէջ կը մնայ, ու պէտք չէ որ մէկը ձեզի սորվեցնէ. հապա ինչպէս նոյն օծութիւնը ձեզի կը սորվեցնէ ամէն բանի վրայով, եւ ճշմարիտ է ու սուտ չէ, եւ ինչպէս Անիկա ձեզի սորվեցուց, անոր մէջ կեցէք: Ա. Յովհ. Բ. 27

Եսայեայ մարգարէին խօսքը ճշմարիտ էր երբ ըսաւ, «Քու բոլոր որդիներդ Տէրոջմէն սորված պիտի ըլլան, ու քու որդիներուդ խաղաղութիւնը շատ պիտի ըլլայ» Եսայ. ԾԴ. 13: Որոշ է թէ մեր վայելած խաղաղութիւնը մեծաւ մասամբ Տէրոջմէ մեր ստացած եւ իւրացուցած ուսման համեմատ պիտի ըլլայ:

Այս ուսումը չստացող քրիստոնեան, զուրկ է այն խորունկ եւ անընդհատ խաղաղութենէն որ անփոխանցելի ժառանգութիւնն է Քրիստոսի դպրոցին շրջանաւարտներուն:

Վախի շատ պատճառներ կան վայրենիի մը մտքին մէջ, ըստ որուն ամայի տեղերը զարհուրելի վայրեր են: Բայց ինչպէս այս բոլորը կ'անհետին գիտական դաստիարակութեամբ մը, նոյնպէս ալ կասկած ու անվստահութիւն կը փախտին, երբ հոգին լիովին կը գիտակցի իր Յիսուսի մէջ ունեցած իսկական դիրքին:

Այս համարին մէջ դիտելի դեղեցիկ կէտ մը կայ թէ սորվեցնողը ուղղակի Տէրն է եւ մանաւանդ որ այս շնորհուած է Իր բոլոր զաւակներուն:

Ո՛չ մէկ դաստիարակութիւն կրնայ բաղդատուիլ հօր մը տուածին հետ: Արուեստով ուսուցիչ մը մեքենական դառնալու ենթակայ է: Ան իրեւն որոշ թիւով ուղեղներով՝ կը նայի իր աշակերտաց վրայ, զորս պէտք է լեցընել քննութեան պատրաստելու համար: Հետեւաբար մասնաւոր հմայք մը կը գտնէ փայլուն եւ ճարպիկ ուսանողաց մէջ, որոնք կարժեցընեն իր հոգածութիւնը: Դաստիարակը վստահի մէջ է պէտք եղածին պէս չգնահատելու ոմանց արժէքը որոնք բթամիտ են, որովհետեւ լաւագոյն սրնունդի կը կարօտին եւ կամ որովհետեւ սերած են թանձրամիտներու ցեղէ մը եւ ապուշցած սերունդներու մտային թմրութենէն: Յոգնաբեկ աղջնակը որ խոնջած է նորածին խնամելով, բթամիտ մանուկը, աղեկը որ չի կրնար իր միտքը կեդրոնացնել, աղքատութեան անսնունդ եւ քուրջեր հագած զաւակը, հազիւ թէ ուշադրութեան կ'արժանանան: Բայց այսպիսի աչառութիւն չկայ հօր մը մէջ եւ այս բաները բնաւ տեղ չունին Աստուծոյ սրտին մէջ: Իր բոլոր զաւակները կ'ուսուցուն: Նա հաւասար խընամով կը հոգայ բոլորը: Թերեւս Ան ամենէն շատ հոգ

կը տանի դանդաղամիտներուն, յաջորդական բարեփոխումներով ներկայացնելով նոյն դասը, մինչեւ որ դասը իրենց կարողութեան մակարդակին իջնէ: Իր ընտրած գործն է քեզի գիտցնել Իր կամքը եւ թէ չկրնար զայս ընել մէկ կերպով՝ ուրիշ եղանակաւ մը պիտի փորձէ: «Խրատ խրատի վրայ, հրաման հրամանի վրայ, քիչ մը հոս, քիչ մը հոն»:

Յաճախ այս դաստիարակութիւնը խրատով (պատիժ) կ'ըլլայ: Ինչպէս Սաղմոսերգուն այնքան լաւ կ'ըսէ, «Երանի՛ այն մարդուն զոր դուն կը խրատես ով Տէր եւ քու օրէնքէդ անոր կը սորվեցնես» Սաղ. 94. 12: Կրնայ ըլլալ որ աւելի քիչ պէտք պիտի ըլլար այս խրատին, եթէ մենք այն նոյն դասերը ժամանակին սորվէինք, մինչ անոնք մեզի ներկայացուցան աւելի դիւրին ձեւերու մէջ: Միայն բոլոր միջոցները սպառելէ յետոյ է որ խրատը կը գործածուի: Սակայն անտարակոյս կարգ մը դասեր կան որոնք միայն Գեթսեմանիի մէջ, խաչին շուքին տակ կարելի է սորվիլ: Ամենէն խոր ուսած քրիստոնեաները ընդհանրապէս անոնք են, որոնք առաջնորդուած են հոգեկան խորունկ տառապանքներու ձուլիչ կրակներուն: Եթէ աղօթած ես աւելի ճանչնալու Քրիստոսը, մի զարմանար երբ Նա քեզ առանձինն անապատ տեղ մը տանի կամ առաջնորդէ ցաւի բովքի մը: Աստուծոյ անձնական նշանը միշտ հնոցի մը մէջ, կրակով կը դրօշմուի հոգոյն վրայ:

Բայց վերջապէս աւելի որոշ, եւ այս նիւթին վրայ իր ուսուցմամբ աւելի օգտաշատ համար մը չկայ քան զայն որ յիշեցինք վերը. «Եւ այն օծութիւնը զոր դուք Իրմէն ընդունեցիք, ձեր մէջ կը մնայ, ու պէտք չէ մէկը (որեւէ մարդ) ձեզի սորվեցնէ, հապա ինչպէս նոյն օծութիւնը ձեզի կը սորվեցնէ ամէն բանի վրայով եւ ճշմարիտ է» Մեզմէ շատերս կարող չենք մասնակցելու այն համաժողովներուն, որոնց նպատակն է յառաջացնել քրիստոնէական կեանքը, որք յատկանշական են այս օրերուն, եւ այնքան կ'օգնեն Հարսը իր Տէրոջը գալտեան պատրաստելու: Երբեմն այս զրկումներէն ոմանք վախի մէջ կ'իյնան խորհելով թէ պիտի կորսնցնեն այն օրհնեալ ճշմարտութիւններէն ոմանք, զորս այս օրերուն զարմանալի կերպով կը պարզուին մեր աչքերուն: Բոլոր այսպիսիները թող դադրեցնեն իրենց վախերը ու թող քաջալերուին այս համարին ներշնչած վստահութիւնովը թէ խանդակաթ ու հնազանդ հոգին նոյն ինքն սիրելի Տէրոջմէն զատ ուրիշ դաստիարակի պէտք չունի:

Եթէ ներքին կեանքին կրթութիւնը իրեն վրտառուի, նա այնպէս պիտի ձեռնարկէ որ ոչ մէկ բան պակաս մնայ զոր գիտնալու ենք, եւ որ չըլլայ թէ ժամանակ վատնուի աւելորդ եւ անպէտ գիտելիքներով: Հաւատացեալը որ իր փրկչին անձ-

Բ Ա Ր Ի Հ Ո Վ Ի Ի Ը

ԵՍ ԲԱՆԻ ՄԸ ԿԱՐՈՏՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՉՈՒՆԵՆԱՄ

Դաւիթ այսպէս յայտնեց իր՝ Տէրոջը վրայ ունեցած վստահութիւնը : Ան ըսաւ. « Տէրք իմ հովիւս է : Ես բանի մը կարօտութիւն պիտի չունենամ. (Սաղմ. ԻԳ.)

Կարօտութիւն պիտի չունենամ — հանգիստի.

Զիս խոտաւէտ արօտներու մէջ կը պառկեցնէ :

Կարօտութիւն պիտի չունենամ — ջուրի.

Հանգարտ ջուրերու քով ինծի կ'առաջնորդէ :

Կարօտութիւն պիտի չունենամ — ներումի.

Հոգիս կը նորոգէ :

Կարօտութիւն պիտի չունենամ — առաջնորդի.

Իր անուանը համար արգարութեան ճամբաներուն մէջ կ'առաջնորդէ ինծի :

Կարօտութիւն պիտի չունենամ — ուղեկիցի.

Թէեւ մահուան շուքի ձորին մէջ ալ պտտիմ, չաբէն պիտի չվախնամ, վասն զի Դուն ինծի հետ ես :

Կարօտութիւն պիտի չունենամ — մխիթարութեան.

Քոս ցուպը ու գաւաղանդ՝ անոնք զիս պիտի մխիթարեն :

Կարօտութիւն պիտի չունենամ — անուշի.

Սեղան կը պատրաստես. . . իմ թշնամիներուս դիմաց :

Կարօտութիւն պիտի չունենամ — ուրախութեան.

Իմ գլուխս իւզով կ'օծես :

Կարօտութիւն պիտի չունենամ — ո՛չ մէկ բանի.

Իմ բաժակս խիստ լեցուն է :

Կարօտութիւն պիտի չունենամ — ո՛չ մէկ բանի այս կեանքին մէջ.

Յիրաւի բարեխաղութիւնը ու ողորմութիւնը ինծի հետ պիտի գան կեանքիս բոլոր օրերուն մէջ :

Կարօտութիւն պիտի չունենամ — ո՛չ մէկ բանի յաւիտենականութեան մէջ.

Ու շատ օրեր Տէրոջը տունը պիտի բնակիմ :

Բնութեցող, չե՞ս ուզեր իր սիրոյ բազուկներուն մէջ նստուելով այս երանութիւնը վայելել :

B. S.

Փ. Յ. Ք.

ԴՈՒՆ ԲԱՆԻ ՄԸ ԿԱՐՈՏՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՉՈՒՆԵՆԱՄ

Մեր Փրկչին խօսքերը կը լրացնեն Դաւիթի երգը « Ես եմ բարի հովիւ » Յովթ. 10 : 11 :

Կարօտութիւն պիտի չունենամ — հանգիստի.

« Եկէք ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ եւ ես ձեզ պիտի հանգչեցնեմ » Մատթ. 11 : 28 :

Կարօտութիւն պիտի չունենամ — ջուրի.

« Եթէ մէկը ծախու է թող ինծի գայ ու խմէ : Յովթ. 7 : 37 :

Կարօտութիւն պիտի չունենամ — ներումի.

« Որքին Մարգոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու : Դուկ. 5. 24 :

Կարօտութիւն պիտի չունենամ — առաջնորդի.

« Ես եմ ճամբան ու ճշմարտութիւնը եւ կեանքը » : Յովթ. 14 : 6 :

Կարօտութիւն պիտի չունենամ — ուղեկիցի.

« Եւ ահա ամէն օր Ես ձեզի հետ եմ » : Մատթ. 28. 20 :

Կարօտութիւն պիտի չունենամ — մխիթարութեան.

« Ես ալ Հօրը պիտի աղաչեմ եւ ուրիշ մխիթարիչ մը պիտի տայ ձեզի » : Յովթ. 14 : 16 :

Կարօտութիւն պիտի չունենամ — անուշի.

« Ես իմ կենաց հացը. ան որ ինծի կ'ուգայ երբէ՛ք պիտի չսնօթեմ » : Յովթ. 6 : 35 :

Կարօտութիւն պիտի չունենամ — ուրախութեան.

« Որպէս զի իմ ուրախութիւնս ձեր մէջ մնայ եւ ձեր ուրախութիւնը չման ըլլայ » : Յովթ. 15 : 11 :

Կարօտութիւն պիտի չունենամ — ո՛չ մէկ բանի.

« Իմ անունովս ի՛նչ որ խնդրէք Հօրմէն, պիտի տայ ձեզի : Յովթ. 16 : 23 :

Կարօտութիւն պիտի չունենամ — ո՛չ մէկ բանի այս կեանքին մէջ.

« Բայց առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը եւ Անոր արգարութիւնը եւ այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի օրուին : Մատթ. 6 : 33 :

Կարօտութիւն պիտի չունենամ — ո՛չ մէկ բանի Յաւիտենականութեան մէջ.

« Հիմա կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ, որ պէտքի ուր որ Ես եմ՝ Դուք ալ հոն ըլլաք :

Նազան դաստիարակութեան տակ է, նուազ չպիտի օգտուի քան անոնք որք եկեղեցիներու դպրոցին բարձրագոյն աթոռներու վրայ նստած են : Այո, եւ երբ Քրիստոս կ'ուսուցանէ, Ան պէտք չունի դրամի կամ վարձքի : Նա միայն հնազանդելու կամեցողութիւն կը պահանջէ, մինչ ճշմարտութեան իւրաքանչիւր պարբերութիւն կը ներկայացուի մեզի : Եթէ մենք

միայն անմիջական գործադրութեան դնենք իր հաղորդած ճշմարտութիւնները, պարզապէս սահման չի կայ այն օրհնեալ գիտութեան որ Ան պիտի սորվեցնէ մեզի :

Վերջացնելէ առաջ երեք նկատելի կէտեր կան : Ա. քրիստոս Սուրբ Հոգիով կը սորվեցնէ : Առանց սխալելու, այս համարին մէջ Սբ. Հոգոյն՝ կակ-

նարկուի իբր «Այն օծութիւնը զոր մենք ընդունեցինք»: Բոլոր Ս. Գրքին մէջ Սբ. Հոգւոյն ներշնչեալ խորհրդանիշը իւրին է: Իւզը որ թափուեցաւ Ահարոնի գլխուն վրայ ու մինչեւ անոր զգեստներուն ծայրը իջաւ, զԱյն կը յիշեցնէ: Սուրբ Հոգին միջոցն է (այսպէս խօսելու համար) Որով Յիսուս կը բնակի յանձնուած սրտին մէջ, կը գործէ հոն եւ Անոր միջոցաւ: Գոհութիւն Աստուծոյ, մենք Սուրբ Հոգին ստացած ենք Իր ձեռքէն: Եւ երբ նա կուտայ, ալ բնաւ ետ չառնէր: Շնորհուած բան մը բնաւ ետ չկրնար քաշուիլ: «Ան (Սբ. Հոգին) ձեր մէջ կը մնայ»: Բայց թէպէտեւ Սբ. Հոգին ետ չկրնար առնուիլ, կրնայ տրտմիլ, մարեցուիլ, ինչ որ մեզի անպատմելի փնաս մըն է: Տեղ տանք Իրեն որ նա կարողանայ մեր մէջ յայտ բերել Իր բոլոր շնորհալի գորութիւնը:

Բ. Այս ուսուցումը ներքին է. Անկասկած կան շատ դասեր զորս նախախնամութիւնը կը սորվեցնէ՝ բայց վերջապէս արտաքին զէպքերու նշանակութիւնը առեղծուած մը կը մնայ մինչեւ որ Ան բանամ «քնարին խրթնարանութիւնները»: Եւ ուսուցմունքը համեմատաբար այնքան հանդարտ եւ համեստ, այնքան ծածկուած կ'ըլլայ որ շատ եռանդուն փնտռողներ կրնան խորհիլ որ երբեք բան սորված կամ ստացած չեն մինչ ամիսներ կը գլին կանցնին: Բայց չենք կրնար չափել տարուէ տարի մեր ըրած յառաջդիմութեան իսկական բովանդակութիւնը. այնքան բացարձակ գաղտնիք մ'է այս ուսուցումը Աստուծոյ եւ մեր Հոգիին միջեւ: Բայց երբ մեծ տագնապ մը վրայ հասնի, փորձութիւն մը, պարտականութիւն մը, եւ Հոգին ի յայտ կը բերէ ուժեր, որոնց ինքզինքն անկարող կը կարծէր, յայնժամ սքանչելի գիւտ մը կ'ընենք արդիւններու՝ որք դանդաղօրէն աճած էին, անցեալ երկար տարիներու ընթացքին:

Գ. Այս ուսուցման գլխաւոր նպատակը մեր քրիստոսի մէջ մնալը ապահովել է: «Ինչպէս անիկա ձեզի սորվեցուց, Անոր մէջ կեցէք»: Ամէն քրիստոնէական յառաջդիմութիւն հո՛ւս կ'սկսի, կը շարունակուի եւ հոս կը բեղմնաւորուի: Յիսուսէ կտրուած՝ բան մը չենք կրնար ընել: Յիսուսի մէջ Իր փառաւոր կեանքին «արմատին եւ պարարտութեանը» հաղորդ կ'ըլլանք: Իր բոլոր լեցունութիւնը հետզհետէ կը մտնէ մեր մէջ: Ուրեմն ինչո՞ւ զարմանանք, որ Սուրբ Հոգիին ուսուցման բովանդակ հակումը՝ պնդելն է այս գլխաւոր անհրաժեշտութեան վրայ: Եւ մենք պարտինք լաւ սորվիլ այս սրբազան գիտութեան մէջ զարգանալ: Սորվիլ Քրիստոսի մէջ մնալ զի բոլոր երկինքը հոն է: Այսպէս է որ Աստուած կըսպասէ մեզի՝ որ Իր որդեակներն ենք:

«Եթէ դուն իմաստութիւնը քեզի կանչես, և քու ձայնդ հանճարին ուղղես»,

«Եթէ զանիկա արծաթի պէս փնտռես, ու ծովի զանձերու պէս խնդրես»,

«Այն ատեն ... Աստուծոյ գիտութիւնը պիտի գտնես», Առախ. Բ. 3-5:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Գ. ԴԱՐՁԸ

Նախանցեալ յօդուածով, (տես «Բանբեր» թիւ 6) ջանացինք պարզել այն պատճառները, որոնք կը մըղէին Պօղոսը հալածել քրիստոնէական եկեղեցին: Այսօր մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք մեծ Առաքեալին դարձին վրայ:

Արդի ա կ'անենք կ'ուրանան այդ զէպքին գերբնական, հրաշալի հանգամանքը եւ կը ջանան անոր համար բնական մեկնութիւն մը գտնել: Անոնց տեսութեամբ՝ Պօղոս խորապէս ազդուած էր Ստեփանոս նախավկայի եւ ուրիշ մարտիրոսներու յաղթանակի ուրախութենէն, որով անոնք դիմագրաւած էին շտանջանքն ու մահը Յիսուսի անուան համար, և ըսկսած էր խորհիլ, տարակուսիլ իր ճամբուն ուղղութեան վրայ եւ թէ թերեւս ինքն էր մոլորեալը եւ ոչ թէ քրիստոնէաները: Ուստի՝ երբ զէպի Դամասկոս կը ճամբորդէր՝ իր խորհուրդները սկսան աւելի ուժգնօրէն զբաղիլ Քրիստոսի յարութեան հարցով և ինք հետզհետէ այնքան յուզուեցաւ որ վերջապէս մտքի յափշտակութիւն մը, տեսիլք մը ունեցաւ, երբ այլեւս բոլորովին անզգայ դարձաւ արտաքին աշխարհի տպաւորութեանց առջեւ և իրեն թուեցաւ թէ Յիսուսը (որուն վրայ կեդրոնացուած էր ամբողջ միտքը), կեցած էր ոչ միայն իր հոգւոյն դիմաց, հապանաւ իր մարմնաւոր աչքերուն առջեւ եւ կը խօսէր իրեն հետ: Ասով անոնք ըսել կ'ուզեն թէ Պօղոսի տեսածը ո՛չ թէ յարուցեալ Քրիստոսն էր, հապա միայն եւ թաւ կ'այս կ'ան պատկեր մը, միայն արտայայտութիւնն ու արտացոլումը իր անձնական խորհուրդներուն:

Բայց այս տեսութիւնը չհամապատասխանէր իրողութեան: Ահա թէ ինչու.—

Մինչեւ այն վայրկեանը, երբ տեղի ունեցաւ զէպքը, Պօղոս զեռանյոդողող էր իր փարիսեցիական զաղափարներուն վրայ: Անոր կը վկայեն թէ՛ Գործք Առաքելոց գիրքը եւ թէ՛ Պօղոսի թուղթերէն ոմանք: Շիտակ է թէ իր սիրտը յաճախ վիշտով կը լեցուէր՝ տեսնելով որ Ստեփանոսի նման ազնիւ մարդիկ իրենց կուրութեան զոհ կ'երթային, սակայն ո՛չ անոնց բերած Սուրբգրական ապացոյցները ու ոչ ալ մարտիրոսացման պահուն անոնց հաւատքով, սիրով եւ ուրախութեամբ պայծառացուած զէմքերը, չէին յաջողած փոխել իր համոզումները քրիստոնէաներու նկատմամբ: Մինչեւ

դարձի ժամուն անոնց հանդէպ դեռ միեւնոյնն էր անոր զաղափարը, ինչպէս նկարագրած էինք «Բանբեր»ի Յունիսի թուոյն մէջ: Դեռ միշտ կը խորհէր թէ անոնք կոյր էին եւ անոնց դաւանանքը միայն պատրանքի վրայ կը կենար, եւ հայհոյանք էր հանդէպ Աստուծոյ եւ մեղանչում աստուածային կատարեալ յայտնութեան՝ օրէնքին դէմ: Ուստի Դա. մասկոսի Յամբուն վրայ ալ՝ իր միտքը կը զբա. յէր ոչ թէ Յիսուսի յարութեան, հապա օրէնքին պատիւը վերականգնելու հարցով: Դեռ չէր խղճահարուեր (Գործ. ԻԳ. 1) արդէն գործած չարիքներուն համար, ընդհակառակը դեռ «Պարտք կը սեպէր՝ Յիսուս Նազովրեցիին դէմ շատ բաներ ընել» (Գործ. ԻԶ. 9), դեռ իր «հայրենի աւանդութիւններուն խիստ նախանձաւոր էր եւ շատ հասակակիցներէն աւելի յառաջադէմ հրէութեան մէջ», ուստի չափէ դուրս կը հալածէր Աստուծոյ եկեղեցին ու կը կործանէր զանիկա», (Գաղ. Ա. 13, 14), Իր կարծիքով կործանման գործը արդէն յաջողած էր Նրուսադէմի մէջ եւ քիչ ետք պիտի յաջողէր նաեւ Դամասկոսի մէջ և ուրիշ տեղերու մէջ: Եւ որքան կ'ապահովուէր յաղթութիւնը՝ Պողոս այնքան աւելի կը հետաքննար Աւետարանէն և կը համոզուէր թէ Աստուած իր կողմն էր և ոչ թէ անգոր խաչեալին ու մահուան դատապարտուած քրիստոնէութեան:

Հոգեկան այսպիսի վիճակի մը մէջ Պողոսի միտքը չէր կրնար տեսիլքով փառաւորեալ Յիսուս մը արտադրել և զԱյն կենդանի կերպով իր առջև կանգնեցնել, ինչպէս կը խորհին արդիականներ: Այդպիսի տեսիլքի մը համար՝ հարկ էր որ իր մէջ նախ խախտած ըլլար իր մինչ այդ ունեցած հաւատքը և սէր ու յարգանք, — զէթ վախի մը զգացում արթնցած՝ հանդէպ Յիսուսի: Բայց՝ ինչպէս վերը նկատեցինք՝ Պողոսէն դեռ շատ հեռի էր և մին և միւսը:

2. Դէպքին մասնակից եղան նաեւ ուղեկիցները: Քանի որ Յիսուս մասնաւորաբար Պողոսի համար երեւցած էր, անոնք աւանատես և ականջալուր չ'եղան ամէն անցուդարձի, բայց գոնէ այնքան բան տեսան և լսեցին ու հասկցան թէ իրենց շուրջը գերբնական դէպք մը տեղի կ'ունենար և ապշեցան ու վախով լեցուեցան: Ղուկաս այս պարագան յիշելով՝ մեզի որոշապէս հասկցնել կ'ուզէ թէ տեղի ունեցածը պարզ տեսիլք մը չէր, տեսիլքին միայն ենթական՝ Պողոս մասնակցած պիտի ըլլար և ոչ թէ անոր ընկերներն ալ: Շիտակը, ան համոզուած է թէ Աստուած այդ միջոցաւ ալ իր զաւակներուն պատգամ կ'ուտայ և կը պատմէ թէ Անիկա տեսիլքով համոզեց Պետրոսը Կոռնելիոսի երթալ (Գործ. Ժ.) և Պողոսը խրախուսեց Կորնէլիոսի մէջ համարձակաբար Յիսուսը քարոզել (Գործ. ԺԸ. 9, 10, բաղդատէնաւ Գործ. Է. 55 և ԺԶ. 9, 10): Այսուհանդերձ Ղուկաս յայտնապէս կը ցուցնէ մեզի թէ Պողոսի դարձի պահուն աւելի կատարեալ յայտնութիւն մը ունեցաւ, — Յիսուս իր փառ-

քովը յայտնուեցաւ ոչ միայն Պողոսի մտքին, հապա նաեւ մարմնաւոր զգայարանքներուն, այնպէս որ նոյնիսկ դէպքին ներկաները «Անոր ձայնը լսեցին» (Գործ. Ժ. 7):

3. Պողոս ալ իր գրած թղթերէն ոմանց մէջ նոյնը կը վկայէ: Մէկ կողմէն յայտնապէս կը խօսի ան թէ տեսիլք ալ ունեցած և յափշտակուած է «մինչև երրորդ երկինքը» (Բ. Կորն. ԺԲ. 1-5), բայց միւս կողմէն գիտէ թէ Յիսուսի երևումը իր դարձի պահուն սոսկ տեսիլք մը չէր, հապա այնպիսի յայտնութիւն մը, որուն նմանը աշակերտները ունեցան միայն Զատիկի յաջորդող քառասուն օրերու ընթացքին: Ոչ միայն կ'ըսէ թէ «Տէր Յիսուս Քրիստոսը տեսած է», հապա «Ճիշդ այնպէս տեսած՝ ինչպէս Պետրոսը եւ միւս առաքեալները՝ Անոր յարութեանն յետոյ (Ա. Կորնթ. Ժ. 1, եւ ԺԵ. 4-8):

Այսպէս կը տեսնենք թէ ամէն բան կը միանայ հաստատելու որ Պողոսի դարձը արդիւնք չէր իր հոգին խռովող տարակոյսներու եւ յուզումներու, Քրիստոսի յարութեան վրայ կեդրոնացած խորհուրդներու եւ կամ տեսիլքի, հապա ուղակի Յիսուսի երեւման՝ յարուցեալ մարմնով:

Միայն այդպիսի յայտնութիւն մը խախտեց Պողոսի գաղափարները, որոնցմէ դրդեալ անիկա կ'ատէր ու կը հալածէր եկեղեցին, եւ զայն համոզեց թէ քրիստոնեաներու հաւատքը մոլորութեան ու մոլեռանդութեան վրայ հիմնուած չէ, հապա ճշմարտութեան: Քանի որ ինքը Քրիստոսը տեսած էր իր աչքերովն իսկ, այլեւս տարակոյս չէր կրնար ունենալ թէ Անիկա յարութիւն առած չէ փառքով ու զօրութիւնով եւ Տէր է ու կենդանի Աստուծոյ Որդին. եւ այդ իրողութեան համոզուելէ ետք՝ մէկ անգամէն ոչնչացաւ ամէն ինչ որու ինքը իր փարիսեցիական եռանդովը հասնիլ կը յուսար, — Օրէնքով արդարանալու հաւատքը, քանզի օրէնքին վրայ ունեցած նախանձախնդրութիւնը՝ զինքը մղած էր Աստուծոյ Որդին հալածելու. ոչնչացած էր նաեւ պարծանքը իր ռաբբիական գիտութիւններու եւ մտաւոր բացառիկ ընդունակութիւններուն ու կարողութիւններուն վրայ, քանզի անոնք բացած չէին իր աչքերը զԱստուած ճանչնալու, ընդհակառակն պատճառ դարձած կուրօրէն Անոր դէմ մարտնչելու եւ չարչարանքի ու մահուան մատնելու Անոր սուրբերը: Տեսաւ թէ ինքը մերկացած է ամէն բանէ, մեղաւոր է եւ «մեղաւորներու գլուխ» եւ ենթակայ՝ միմիայն Աստուծոյ բարկութեան ու ահաւոր դատաստանին:

Սակայն Պողոս, մինչ մէկ կողմէն տեսաւ իր փարիսեցիական արդարութեան փշրուիլը, օրէնքին անգորութիւնը եւ իր լեռնակուտակ մեղքերը, միւս կողմէն ալ ապրումն ունեցաւ Յիսուսի անհուն ներդաժողութեան ու սիրոյն. փառաւորեալ Քրիստոսը իր դէմն ելած էր՝ ոչ թէ իրմէ մարտիրոսներու արիւնը պահանջելու, հապա զինքը աշակերտութեան ու առաքելութեան հրաւիրելու (Գաղ. Ա. 15, 16): Ոչ թէ զինքը անյուսութեան խաւարին մէջ կաշկանդելու, հապա Աս-

տուժոյ զաւակներուն փառաւոր ազատութեանը առաջ նորդելու :

Այս երկու ապրումներէն յետոյ Աստուծոյ Հոգւոյն զօրութեամբ Պօղոսի խորարմատ, բայց խոտորեալ բարեպաշտութիւնը այլեւս ստացաւ իր ճշգրիտ ուղղութիւնը, այլեւս քրիստոս էր իր «Իմաստութիւնը, արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը» : Անոր սկսաւ հետեւիլ իր հօր կամքին ամբողջ թափով՝ առանց ունէ բան հարցնելու «մարմինն եւ արինին» : Անոր սիրոյն ու փառքին համար զոհեց ապագային Իսրայէլի մէջ բան մը արժեւոր աշխարհութիւնը, աշխարհի պատին ու փառքը, եւ յանձն առաւ ենթարկուելու արհամարհանքի, հալածանքի, տառապանքի ու մահուան : Ատկէ ետք իր միակ փափաքն էր ճանչնալ զԱյն ու Անոր յորութեան զօրութիւնը եւ ամբողջովին ընկղմիլ Անոր մէջ, եւ միակ ճիգը՝ ամբողջ աշխարհը խոնարհեցնել Անոր ոտքերուն առջեւ :

Իր նկարագիրն ալ ամբողջովին փոխուեցաւ : Իր մէջ մեռաւ «խաբեբայ ցանկութիւններով ապականուած հին մարդը» եւ անոր տեղ յարութիւն առաւ «Աստուծոյ պատկերին պէս ստեղծուած նոր մարդը» : Ան մերկացաւ փարիսեցիական հպարտութենէն եւ հագաւ Քրիստոսի հեղ ու խոնարհ հոգին. ձգեց իր նեղմտութիւնն ու ատելութիւնը եւ լեցուեցաւ լայնմտութեամբ ու սիրով, նոյնիսկ իր թշնամիներուն հանդէպ : Թէեւ անիկա իր դարձէն ետքն ալ կրնար երբեմն շատ խիստ ըլլալ. Օրինակ, հրէամիտ քրիստոնեաներու դէմ, սակայն այդ խստութեան սուր ծայրը կոտորած է Յիսուսի սիրովը, որ ատկէ ետք միշտ զինքը մղող զսպանակն եղաւ՝ թէ՛ իր անհատական յարաբերութիւններուն եւ թէ՛ առաքելական գործունէութեան մէջ : Իր կեանքը ճշգրիտ մեկնութիւնն է «Սիրոյ Սաղմոսին» (Ա. Կոր. ԺԳ.) : «Թէեւ իր Սէրը մէկ կողմէն շատ փափուկ ու սրբտառու էր, ինչպէս ի յայտ կուգայ Փիլիպպեցոց ու Փիլիմոնի նամակներուն եւ Յփեսոսի երէցներուն ուղած հրաժեշտի խօսքերուն մէջ», բայց միւս կողմէն թոյլ եւ տկար ալ չէր, հապա առնական ու կորովի, նոյնիսկ խիստ՝ հանդէպ իր տկար բարեկամներուն ու թշնամիներուն :

Այսպէս Պօղոս իր դարձին միջոցաւ խաչը ելած էր իր անձին ու աշխարհին. կ'ապրէր ո՛չ թէ ինքը հապա յարուցեալ Քրիստոսը իր մէջ : Ատկէ ետքը այլեւս «ընտիր աման մըն էր», Տէրոջ «անունը» կրելու հեթանոսներու ու թագաւորներու եւ Իսրայէլի որդիներուն առջեւ» (Գործ. Թ. 15) : Իր ռաբբիական դաստիարակութիւնը, յունահռոմէական քաղաքակրթութեան քաջամանօթ ըլլալը, ինքնատիպ ու խորթափանց խորհողութիւնն ու տրամաբանութիւնը, եւ մանաւանդ ճշմարտութեան նախանձախնդիր ու Աստուծոյ եւ մարդկութեան սիրովը տոյժորդ սիրտը Յիսուսի ձեռքին մէջ զօրաւոր զէնքեր էին՝ Հեթանոս աշխարհը նուաճելու համար : Դարձի գալէն յետոյ նոյնիսկ իր տկարութիւնները մեծ օրհնութիւն

էին միախոնարական գործին համար, որուն Աստուած զինքը որոշած էր նոյնիսկ իր «մօրը որովայնէն» Դադտ. Ա. 15) եւ որուն նուիրուեցաւ իր դարձէն անմիջապէս յետոյ :

(Շար.)

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ՄԱՆԿԱՆՅ ՍԻՆԱԿ

ԱՐԴԱՐ ԵՂԻՐ ԱՄԵՆՈՒՆ ՀԱՆԴԵՊ

Աղէկ է քիչ բան արդարութեամբ, քան թէ մեծ եկամուտներ՝ անիրաւութեամբ : Առաւ. 16 : 8 :

Մաւրիտանացի թագաւորներէն մին փափաքեցաւ իր պարտեզին քով գտնուած դաշտի մը վրայ տաղաւար մը շինել : Դաշտը կը պատկանէր կնոջ մը որ չէր ուզեր բաժնուիլ իր հայրերուն ժառանգութենէն : Թագաւորը բռնի գրաւեց դաշտը : Անոր վրայ կինը դատաւորին զիմեց : Դատաւորը խոստացաւ իր կըրցածը ընել : Օր մը երբ թագաւորը դաշտին վրայ կը գտնուէր, դատաւորը պարապ տողաւով մը մօտեցաւ անոր ու թոյլտուութիւն խնդրեց լեցնելու իր տողաւը այնտեղի հողէն : Տուաւ իր լեցնելէ յետոյ թագաւորէն խնդրեց որ իրենօգնէր զայն ձիուն վրայ դնելու : Թագաւորը խնդալով բռնեց տողաւը, սակայն վերցնելու փորձած միջոցին զայն ծանր գտնելով՝ գետին ձգեց : «Ասիկա միայն մէկ փոքր մասն է այն հողին զոր դուն քու հպատակներէդ մէկէն խլեցիր», պատասխանեց դատաւորը, «հապա ինչպէ՞ս պիտի վերցնես ամբողջ դաշտին ծանրութիւնը երբ այս անօրէնութիւնը ուսերուդ՝ Մեծ Դատաւորին առջեւ ներկայանաս» : Թագաւորը այդ յանդիմանութեան ազդեցութեան տակ ոչ թէ միայն դաշտը վերադարձուց կնոջը, այլ նուիրեց անոր նաեւ իր հոն կառուցած հիւղակը անոր ամբողջ պարունակութեամբ :

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսոսաց Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Ժողովը այս տարի տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 8-11 Լիոնի մէջ եթէ Տէրը կամի :

Le Gérant: Mr. le PASTEUR KALTENBACH

Տպգր. «ԲԱՆՔԵՐ»-ի, Imp. Serres, 81, Rue A. Thiers M^{le}.